

ԱՔԵՏԱՐԵՐ



“ՓՈՂ ՏՈՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.


ՀԱՏՈՐ ԻԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1892

ԹԻԻ 7

ՍԱԼՄՈՆ ԶԿԱՆ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

Սարմնն ձուկը (սարմնն պալուշ) և կարմրախայտ ձուկը (ալապուշ) առհասկա շատ մտա են իրարու, և իբրև ուտեստ ամենէն աւելի յարգ ունին բոլոր անոյշ ջրոյ ձրկանց մէջ: Կարմրախայտը հասարակօրէն աւելի փոքր է, պայծառ պիտակներ ունի և միշտ կը գտնուի անոյշ ջրի մէջ: Ըստ մեր կարծեաց կը գտնուի թուրքիոյ բազում գետերուն և վտակաց մէջ: Մենք կերած ենք շատ ընտիր կարմրախայտ որ կը բերուէր ի Շատախ գտնուող գետակէ մը, որ է վան քաղաքէն իբր երկու օրուան ճամբաց հեռի: Սարմնն ձուկն ևս կ'որսացուի անոյշ ջրի մէջ, բայց տարւոյն քանի մը եղանակաց մէջ կ'իջնէ ի ծով: Կ'ուտուի թարմ, չորցած, ծխեալ և ալած վիճակի մէջ: Սարմնն ձկան առևտուրը շատ ընդարձակ է, և այդ ձուկը կը գտնուի Եւրոպայի, Ասիոյ և Ամերիկայի հիւսիսային մասանց մէջ: Սարմնն մեծ արագութեամբ կը լողայ, և գիտուած է որ ջրէն 14 ոտք դուրս կը նետուի և 20 ոտք բարձր ջրվէժէ մը վեր կ'ելլէ: Սարմնք իրենց ձուերը կ'ածեն աւազի մէջ գետոց յատակները ուր կը մնան ձմեռը և ձագերը կ'ելլեն գարունին: Ձագերը ամբողջ առաջին տարին կ'անցունեն անոյշ ջրոյ մէջ, և առաջին անգամ իրենց երկրորդ տարին կը մտնեն ծով: Սարմնք երբեմն կ'ունենան մինչև 25 քաշ ծանրութիւն, բայց 10 քաշ կը ող սարմնն մը բաւական խոշոր կը համարուի: Պատկերը կը ցուցնէ մեծ ուռիանով սարմնն բռնելու եղանակն յիշատակ: Չուրը շատ յստակ է և յատակն սպիտակ, այնպէս որ բարձ-



ՍԱԼՄՈՆ ԶԿԱՆ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

ըր գտնուող մը կարող է տեսնել ձկան շարժումները և ըսել ձկնորսներուն թէ ո՛ր նետելու են ուռիանը: Ի կապտախ Սեանայ լճին և ի Մակեդոնիա Օկրիտա լճին մէջ կը գտնուի այս տեսակին վերաբերեալ համեղ ձուկ մը զոր Անգլիացիք կը կոչեն Սարմն-Կարմրախայտ:
 ԽԱԽԱՐԻՆ ՄԷՋ ԼՈՑՍ ՄԸ
 Գանի մը երկիրներու մէջ, ինչպէս յԱփրիկէ, ընդարձակ մասեր կան ուր կը խօսուի մէկ լեզու միայն, և երբ անգամ մը Աստուծոյ խօսքը թարգմանուի այդ լեզուին, կ'երթայ այնպիսի տեղեր ուր ճանապարհորդք և միտինարք երբեք չեն գացած և լոյս և օրհնութիւն կը սփռէ իւր ճամբուն վրայ:
 Ռուսները Մոֆատ իւր «Միտինարական Աշխատութիւնք և Տեսարանք

յԱփրիկէ” անուն գիրքին վերջին երեսներուն մէջ կ'ըսէ Նոր Կտակարան մը գտած էր այնպիսի տեղ մը ուր չէր սպասեր: Կանուխ իւր ընկերաց հետ բրած ճանապարհորդութեանց միոյն ժամանակը եկաւ գիւղ մը Օրէնճ գետոյ եզերաց վրայ, Նամագուա Լէնտի և կրիգուա երկրին մէջտեղ: Յիշեալ անձը կ'ըսէ.
 “Շատ ճանապարհորդած էինք, և էինք անօթի, ծարաւ և յոգնած: Ասիս մտերէ գերծ ըլլալու համար՝ աւելի աղէկ համարեցանք գիւղը մնալ քան յառաջ քաշել գիշերը: Գիւղացիք բերաւ կերպով առաջնորդեցին մեզ իջնել հեռի տեղ մը: Չուր խնդրեցինք, բայց չուզեցին տալ: Տուի երեք կամ չորս կոճակներ, որ տակաւին կը մնային վերաբերուիս վրայ, քիչ մը կաթի համար, այս ալ չտուին: Կը սպասէինք անօթի գիշեր մը ևս անցունել ջրէ հեռի, թէպէտ գետը կ'երևէր: Գիտար կացութեան մէջ կը գտնուէինք, վասն զի ոչ միայն կրկին և կրկին մերժումներ տեսանք, ոչ Նաև գիւղացոց վարմանց կերպը կասկածել տուաւ մեզ:
 “Երբ արշալոյսը մտեցաւ, կին մը

եկաւ բլրէ մը որոյ միւս կողմը կը դանուէր զիւրա իւր զլիտուն վրայ կը կրէր խորձ մը փայտ, և իւր ձեռքն ունէր աման մը կաթ: Կինն տռանց բահալու իւր բերանը, մեզ երկնցուց կաթին ամանը, վար դրաւ փայտերը և դարձաւ զիւր: Երկրորդ անգամ եկաւ իւր զլիտուն վրայ ունեւալով կաթոսայ մը և ձեռքը՝ ոչխարի ազդր մը և միւս ձեռքը՝ ջուր: Նստաւ առանց բառ մը խօսելու, պատրաստեց կրակը և վրան դրաւ միսը:

«Կրկին և կրկին հարցուցինք իրեն թէ ո՞վ էր: Լուռ կը մնար. մինչև որ շատ աղաչեցինք որ ըսէր մեզ թէ ինչո՞ւ համար այսպիսի անակնկալ մարդասիրութիւն կը ցուցնէր օտարականներու: Արտասուաց կաթիլ մը իւր սեռիկ այտէն վար սահեցաւ երբ պատասխանեց.

«Այլ սիրեմ՝ զՈյն որոյ ծառաներն էք դուք. և անշուշտ իմ պարտականութիւնս է առ ձեզ բաժակ մը պաղ ջուր Անոր անունովը: Սիրաս լցուած է, վասն որոյ չեմ կարող խօսքով յայտնել զզայցած ուրախութիւնս զձեզ տեսնելուս համար աշխարհէ դուրս գտնուող այս տեղոյն մէջ՝

«Գիշ մը տեղեկանալով իւր պատմութեանը, և թէ ինքն էր միայնակ լոյս մը որ կը վառէր մութին մէջ, հարցուցի իրեն թէ ի՞նչպէս պահած էր Աստուծոյ կեանքը իւր հոգւոյն մէջ՝ բոլորովին հեռի գտնուելով սրբոց հազարդութենէն: Ծոցէն հանեց Հոլանտացոց լեզուաւ Նոր կտակարան մը զոր ընդունած էր Մր. Հէրլէ մինչ քանի մը տարի առաջ կը գտնուէր անոր գպրոցին մէջ, տակաւին այս առանձնութեան մէջ քաշուիլ չափալուծ իւր առնչութեանց պատճառաւ:

«Ս, յո է,՝ ըսաւ, «այն աղբիւրը որմէ կը խմեմ. այս է իւրը որ վառ կը պահէ իմ յամբարս՝ Նայեցայ Բրիտանական և Արաաբին Աստուածաշնչի ընկերութեան հրատարակած այն թանկագին նշխարին վրայ. և ընթերցողը կրնայ ըմբռնել թէ ի՞նչ զգացում ունեցանք ես և իմ հետ գտնուող հաւատացեալ ընկերներս երբ պատահեցանք Բրիտանոսի այն աշակերտին, և խառնեցինք մեր համակրութիւնները և աղօթքները մեր երկնաւոր Հօր աթոռին առջև: «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ի՞նչ կարևոր է ծառայել կենաց

խօսքը հեռին՝ երկրի այն աղղաց մէջ որք կը նստին խաւորի և մահուան շուքին մէջ: Թող ամէն քրիստոնեայ մանուկ աղօթէ և աշխատի զայս յառաջ բերել, վասն զի այսպիսի աշխատութիւնը պարապ չէ Տէրովնով:



ԵՐԱԺԻՇՏ ԿԱՏՈՒ ՄԸ

Մնցեալ ամառ քանի մը ամիս անցուցինք ընտանիքի մը մէջ որ ունէր

համար: Կը նստէր դաշնամուրին նստալանին վրայ և իւր թաթիկներով ամուր կը զարնէր ստեղնաշարին, իբր թէ վարժութիւն ընելով իւր երաժշտութեան դասատուին տուած դասը պատրաստելու համար:

ԹՂՈՐԱՆ Է. ԷՏԻՍԸՆ

Էտիսընի նոյն իսկ անունը կը յիշեցունէ երեկտրականութիւն: Նա ար-



ԵՐԱԺԻՇՏ ԿԱՏՈՒ ՄԸ

խաղուն կատուի ձագ մը որ երբեմն կը զբօսնուր դաշնամուրին ստեղնաշարին վրայ ցտակելով: Պատկերին մէջ տեսնուած երկայն ճերմակ մազերով կատուն, նման սվանայ կատու՝ կոչուածին, կ'ընէր նոյն բանը: Իւր տէրը կ'ըսէ թէ երբ առաջին անգամ նեաուեցաւ դաշնամուրին ստեղնաշարին վրայ, անմիջապէս վար ցտակեց զարհուրելով անոր համար ձայնէն: Յաջորդ օրը դարձեալ զարհուրեցաւ բամբ ձայներուն վրայ կոխելով և լսելով իւր հնչիւններ: Բայց շուտով անցաւ անոր սոսկումը, և այնուհետ ընդհակառակն յատուկ դիտամբ ձայներ հանել կու տար նուազ արանին՝ զբօսնու

ղէն չորս հարիւր զիւտերու համար մենաշնորհ (patent) ստացած է Միացեալ Նահանգաց կառավարութենէն, և հիմա իսկ թերևս ուրիշ նոր հնարքներ գտած է և կը գտնէ զորս պիտի ներկայացունէ մենաշնորհի պաշտօնարանին:

Որովհետև տակաւին միայն քառասունչորս տարեկան է, և միշտ կը զբաղի ծանր աշխատութեամբ, անկարելի է մինչև անգամ երեւակայել թէ իւր գործունեայ ուղեղն ի՞նչ պիտի արտադրէ այս ապագայ տարիներուն մէջ: Թհոմաս Էտիսըն աղքատ էր ի մանկութեան, և իւր շատ մատող հասակէն սկսեալ ստիպուած էր աշխա-

տեղով հայթայթել իւր ապրուստը : Տարուան մէջ միայն երկու ամիս դարոց կ'երթար, և ուրիշ ժամանակ երբեք չունէր ուսուցիչ բաց ի մօրմէն : Երբ տասներկու տարեկան եղաւ, ինամով կարգացած էր պատմական և գիտնական քանի մը գիրքեր : Ստակի մասին բաւական նեղութիւններու մէջ ինկաւ, բայց երբեք չցուցուց վճատութիւն : Հետագայ պատմութենէն կը տեսնուի թէ ինչ անվեհեր բնուութիւն տէր էր նա :

Երբ պատանի էր, իբրև լրագրագետ կը ճանապարհորդէր երկաթուղւոյ կառավարութի մը մէջ : Փիթրապուրկ Լէնտինի ճակատամարտէն մէկ օր ետքը առատօտուն լրագիրք խոշոր տառերով կը ծանուցանէին թէ երեք հազար մարդիկ վիրաւորուած և սպաննուած էին : Աչալուրջ պատանին գնեց հազար լրագիր փոխանակ սովորական հարիւր յիսունին : Կանխաւ հեռագրեց ճակատամարտին համառօտութիւնը որ տոմսակի ձևով փակցուեցաւ երկաթուղւոյ կայաններուն մէջ : Երբ կառավարը կը հասնէր մէն մի կայարան, բազմութիւնք կը հաւաքէին, և կայարաններուն մէջ ուր սովորաբար երկու լրագիր կը ծախուէր, ծախուեցաւ քառասուն, և այն՝ կրկին գնով :

Այս գէպքէն շատ ետքը սորվեցաւ հեռագրութիւն, բայց իբրև հեռագրական պաշտօնեայ իւր գիրքը չպահեց շատ երկար ատեն, վասն զի իւր արագ աճող հմտութիւնը և շատ փորձարկութիւնք շարունակ ձանձրոյթ կուտային իւր վարպետներուն : Որովհետև իւր շահած բոլոր ստակը կը գործածէր փորձեր կատարելու, երբեք աղէկ չէր հոգուեր, և անգամ մը այնպէս խեղճ վիճակի մէջ կը գտնուէր որ երբ ձմեռ ժամանակ կ'երթար ի Մեմֆիս, իւր մի միայն վերարկուն էր կտաւէ թեթև բան մը : Բայց հանդերձով կամ առանց հանդերձի, փորձարկութիւնք շարունակուեցան, մինչև որ Էտիսին հասաւ միայն յաջողութեան : Հաւանականապէս անոր գիւտերէն և ոչ մին երբեք գերազանցած է ձայնագրութիւնը՝ իւր մեծ օրհնութեամբք առ մարդկութիւնն : Արդէն այս գիւտը որդեգրած է Տրոֆիմովալ Մայսթերը շափթի գրութեամբ լեզուներ սորվեցունելու համար, և այժմ կը գործածեն զայն Հաւայի, Յոն և տանկ մէկ կենդանի լեզուներու աւելի քան 500,000 ուսանողք : Քաջ ուսուցիչը ձայնագիր գործարար չառնէ կ'արտասանեն դասերը որք կ'արձանագրուին կը

գործունին անոր թիթեղներուն վրայ : Յետոյ ուսանողը կրկնել կուտայ զայն քանի հարիւր անգամ որ ուզէ, առանց երբեք մեքենայէն յանդիմանութիւններ ըլելու իւր բթամտութեան դէմ :

Եւ այժմ կուրաց վարժապետի մը թեյադրութեան վրայ, Մր. Էտիսին կ'ընէ փորձեր՝ փոքրիկացունելու համար ձայնագրին գլանը և աւելցունելու անոր ընդունակութիւնը, այնպէս որ կարելի ըլլայ գործածել զայն կուրաց դաստիարակութեան :

Աւելնալով ձայնագրին գլանին ընդունակութիւնը, ինչպէս կը յուսայ Մր. Էտիսին, անբայձ գիրքեր կարելի է կարգաւ ձայնագրով, և կայրք այլ ևս պէտք պիտի չունենան ուսուցիչի գիւրբու կամ սորվելու համար ընթերցողաց վարձք վճարելու :



ՄԱՀԱՄԵՐՁ ՍՊԱՆ

Թհոմաս Էտիսին իրաւամբ կրնայ կոչուիլ դարուս մեծագոյն մարդոց մին. բայց մեր օրերուն մէջ իւրաքանչիւր տղայ պարտի յիշել թէ իւր մեծութիւնը կու գայ ոչ միայն բնական սաղանդէ, այլ նաև աշխատասիրութենէ և յարատեւութենէ՝ Աստուծոյ պարգևած կարողութեանց մեծագոյն մասը գործածելու մէջ :

ՄԱՀԱՄԵՐՁ ՍՊԱՆ

Այս պատկերը կը յիշեցունէ Էրոպական վերջին պատերազմաց միոյն մէջ պատահած գէպք մը : Նոր վերջացած էր արիւնահեղ ճակատամարտ մը, և թնդանօթից գուռներուն յաջորդած էին վիրաւորելոց հեծութիւնները և օգնութիւն խնդրող սաղաղակները : Վիրաւորեալներուն մէջ կը գրանուէր երիտասարդ սպայ մը որոյ այրի մայրը անոր երթաւ բարեաւ մտղթած

էր քանի մը ամիս առաջ դառն արտասուք : Նա գիշեր և ցերեկ աղօթք կ'ընէր իւր զաւկին համար, փափաքելով վերստին տեսնել զնա, մանաւանդ փափաքելով որ իւր որդին յանձնէր ինքզինք այն պատուական ֆրկչին զոր այնքան կը սիրէր : Իւր որդւոյն տուած էր Նոր կատարան մը իւր և որդւոյն անունը գրելով անոր մէջ, և տակը՝ սա խօսքը . « Ան որ ինձի կու գայ՝ բնաւ դուրս պիտի չհանեմ » :

Երիտասարդ սպային վերքը մահացու էր : Իւր շարչարանաց մէջ մացրը կը կանչէր, նաև ջուր կ'ուզէր : Իւր մօտ կը գտնուէր վիրաւորեալ զինուոր մը որոյ վերքը այնքան ծանր չէր : Սա ճանչնալով իւր սպային ձայնը, խաւարին մէջ սողակելով գնաց գէպայն տեղը ուրկէ ձայնը կու գար : Իւր սափորին մէջ ունէր քիչ մը ջուր, վերցունելով սպային զուլը, ջուրը խնցուց անոր : Սպան քիչ մը դիտելով զնա շնորհակալ եղաւ իւր հաւատարիմ զինուորին և զինուորը պատուեց փրցուց իւր շապիկէն կտոր մը՝ կապելու համար սպային վերքը, և նոյն ժամանակ հարցուց, « Ունի՞ք ինձ հրամայելու ուրիշ բան մը » : « Այո », պատասխանեց սպան, հանելով ծոցէն իւր Նոր կաակարանը, « սաք զայս իմ մօրս և ըսէ անոր թէ ես յանձնեցի զիս քրիստոսի և նա ընդունեց զիս : Ըսէ նաև թէ ես մեռայ խաղաղութեամբ » : Գիշ յետոյ սպան մեռաւ հանգարաւ սրտով :

Զինուորն մտածելով այս խօսքերուն վրայ և կարգալով Նոր կաակարանը մինչ իւր քով կը գտնուէր այն, առաջնորդուեցաւ նուիրել իւր կեանքը իւր ֆրկչին ծառայութեանը :

Շատ պարզ է այս պատմութիւնը, բայց կը պարունակէ դաս մը մեզ ամենուս համար : Կու գայ օր մը երբ մենք ամէնքս ալ պիտի մեռնինք : Մենէն շատերուն անակնկալ ժամանակ պիտի գայ մահը : Պատրաստուած ենք մեռնելու, ինչպէս պատրաստուած էր այդ երիտասարդ սպան :

ՍԱՐԳՍԻ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Սարգիս սասացած էր նոր թուաբանութիւն մը, և շատ կը սիրէր աւոր թուանշանները և ուսումը : Ժամանակ մը կարգացած էր համառօտ մտաւոր թուաբանութիւն, բայց հիմա որ ունէր իրեն սեպհական մեծ գիրք մը և քարէ տախտակ, իրեն աչքին

ամէն բան կ'երևէր գումար և հաշիւներ: Օր մը մինչ նստած էր սեղանին առջևը, թուաբանական գործողութեան մէջ գումար մը ընելու համար, լսեց որ իւր հայրը կ'ըսէր մօրը, «Գէորգ երէկ զիշեր շատ խմեց զինետան մէջ և շատ ծայրելի վիճակի մը մէջ ինկաւ: Տոսն բաժակ գինի խմեց և զինին զլուին ելաւ: Այնպիսի խայտառակ վիճակ մը ունեցաւ որ ամէնքս ալ զգրեցանք իրմէ, և ի վերջոյ այնքան զինովցաւ որ քաշելու անկարող ըլլալով տուն տարուեցաւ կառքով:»

Մարգիս, որ ընկզմած էր իւր թուաբանական հաշիւներուն մէջ, լսեց «տոսն» բառը, և վեր նայելով ըսաւ, «Տոսն: Եւ դ՞ու՞ն որչափ խմեցիր, հայր:» «Միայն մէկ, աղաս», ըսաւ հայրը, ժպտուն գիծօք վար նստելով իւր փոքրիկ աղին վրայ զոր շատ կը սիրէր: «Ուրեմն, հայր, դուն մէկ տասներորդ զինովցա՞ր», ըսաւ Մարգիս խոհուն կերպով, թերևս աւելի մտածելով ճիշտ այն միջոցին իւր թուանշանաց վրայ քան ուրիշ բանի վրայ: «Մարգիս», ըսաւ հայրը, «կ'նչ ըսել կ'ուզես:» Բայց Մարգիս, որ բարձրովին ընկզմած էր իւր հաշիւներուն մէջ, յառաջ գնաց խօսելով ինքնիրեն, «Այո, եթէ տասն բաժակ զինին կատարելապէս կը գինովցունէ զմարդ, և եթէ Գէորգ մարդու անվայել կերպով կը գինովնայ, ուրեմն միւսը մէկ տասներորդ անվայել կերպով կը գինովնայ, և —»

«Է՛, է՛», ըսաւ հայրը, խածնելով իւր շրթունքը որպէս զի ծածկէր իւր ժպիտը, «կարծեմ այդ թուաբանութիւնը բաւական է այս զիշերուն համար:»

Բայց մինչ Մարգիս յառաջ կը տանէր գումարման գործողութիւնները, նորա խօսքերը մտածել տաին իւր հօր, որ ըսաւ ինքնիրեն, «Եթէ Գէորգ առած չըլլար առաջին բաժակը, տասն բաժակ խմելու պիտի չսովորէր. ուստի, որպէս զի ո՛չ ես ըլլամ զինեմնը մը և ո՛չ չար օրինակ իմ գաւակացոյ, ապահով ճամբան այն է որ այլ ևս չառնում երբեք առաջին բաժակը, զի մի՛ գուցէ ես կամ անոնք երթալով աւելցունենք մինչև տասն բաժակը:» Այդ օրէն սկսեալ, հայրը բարձրովին հրաժարեցաւ զինովցունող որ և իցէ ըմպելիէ:

ԹՁՈՒԿՆԵՐՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԻ ՄԸ

Մօտերս ի փերու գանուեցաւ զարմանալի քաղաք մը ուր անտարակոյս

կը բնակէին թզուկներ (ճէ-ճէ): Թէպէտ տուներէն ոմանք մինչև երեք յարկ ունին, սակայն սենեակներէն ոմանց տարածութիւնն է միայն իբր երեք քառակուսի ոտք: Գուռերուն բարձրութիւնն է մէկ ոտք, և գտնուած մուտքներէն ոչ մին ունի քսանեւեօթն մասնաշափէ աւելի բարձրութիւն: Մէն մի սենեակ իւր կեդրոնն ունի տափակ քար մը: Ատոնք հաւանականապէս էին սեղաններ որոց բարձրքը անտարակոյս կը չընկապատէին շատ մը երջանիկ իսամբեր: Երևակայեցէք փոքրիկ տանակիին մը որ իւր մանրիկ կարկանդակները և քարանները կը պարտաստէ. արդարեւ պաճուճագատանքներու ակումբ մը: Բարձրքին ներսի կողմը կայ 200 ոտք բարձր ժայռի մը վրայ շինուած միջնաբերդ մը: Բնիկները զայս կը կարծէին չար ոգիներու ընտկարան, և ուստի սակէ առաջ երբեք հետախուզուած չէր: Երևակայեցէք այն ստակումը զոր անոնց աներկիւղ սիրտերը պիտի զգային քան մասնաշափ բարձրութեամբ ոգի մը տեսնելով: Ի՞նչո՞թ էր որ թզուկներու ժողովուրդներ կը գտնուին ուրիշ երկրաց մէջ — Սթէնլի անոնց նկարագրութիւնը կ'ընէ իւր գրեանց մէջ — բայց սա է արևմտեան ցամաքին վրայ անոնց առաջին հետքը: Այդ հետաքրքրաշարժ նշխարք պիտի պահուին Սմիթհարնեան Հաստատութեան մէջ յՈւաշինկթըն:

ԳԱԶԱՆԱԶՈՒՍՈՂ

Անդ զիւրէն հանդիսի մը մէջ կը գտնուի հետադայ պատմութիւնը Մարթին անուն հռչակաւոր գաղանազուպին վրայ:

Երբ հռչակաւոր գաղանազուպը, որ մեռաւ մօտերս, կ'սպրբէր առանձին մարդկային ընկերութենէն քաշուած, որ մը որոշեց այցելութիւն մը ընել իւր գաղաններու նախկին ընդարձակ փակարանը զոր չէր տեսած հինգ տարիներէ հետէ: Փակարանը կը գտնուէր ի Պրիսէլ. ճամբայ ելաւ երթալ այդ քաղաքը իւր զիւղային բնակարանէն որ մօտ էր Ռոթէրտամի: Ժամ չորսին, գաղանները կերակրելու տեսնը, մտաւ փակարանը: Չմեռ էր, և Մարթին փաթթուած էր երկայն վերարկուի մը մէջ: Խառնուեցաւ բազմութեան մէջ և սպասեց մինչև որ կենդանիք ընդունեցին իրենց ուտեստը, որում կը սպասէին վայրագ անհամբերութեամբ: Մինչանոնք կ'ուտէին, Մարթին հազաց քանի մը անգամ: Իսկոյն կենդանիք գաղարեցան ուտել և մտիկ կ'ընէին:

Այնուհետև սկսան հանել ուրախութեան վայրենի գուռներ և ունալու ձայներ, և վազեցին դէպ ի երկաթ վանդակարմը (ֆոֆէ), այնպէս որ երկչուս շատ այցելուներ փախան: Թութակները, քանկարուները, հաւառուները և կապիկներն սկսան ճշել և ազդակել: Բորենիները և գայլք կ'ուտային: Համառօտիւ, կատարեալ յիմարանոցի մը տեսարանը կը պարզուէր:

Յետոյ Մարթին յառաջ քաղեց Չեռքի շարժմամբ և զօրաւոր ձայնովն հրամայեց լուծիւն, և ահա իսկոյն թագաւորեց հանգարտութիւն: Անցաւ ներս երկաթ վանդակարմը վրայէն որ կը դատէր հանդիսատեսները կենդանիներէն, խոթեց իւր ձեռքը վանդակներուն մէջ և շոյեց գաղանները: Խոշոր մտտակ վագր մը աւելի ցնծութիւն կը ցոյցնէր քան միւս գաղաններէն որ և իցէ մին: Երբ Մարթինի ձեռքը կը շոյէր նորա շքեղ մուշտակը, գաղանին սրունքները սաստիկ կը զողոյնէին, և նա ակար և փափուկ ձայնով կը մրմուռ, և վանդակին երկաթ ձողերուն միջոցէն իւր խորտարորտ լեզուաւ կը լղէր իւր նախկին տիրաջ երեսը: Երբ Մարթին հեռացաւ անկէ, վագրը պառկեցաւ և այլ ևս չկերաւ:

Վանդակներէն միոյն մէջ կը գրտնուէր առիւծ մը Ներոն անուն, որ յառաջմէ խածած էր Մարթինի ազգը և սաստիկ պատժուած էր: Այդ դէպքէն հետէ առիւծն անհաշտ աւելաւ իւր պահէր գաղանազուպին դէմ: Երբ Մարթին մօտեցաւ անոր վանդակին, Ներոն ուրիշ շարժում չըրաւ բայց միայն վերցոց իւր գլուխը և նայեցաւ անոր վրայ նըշանակալից կերպով մը: Մնաց իւր տեղը: Հանգարտ պառկած էր վանդակին յետակողմը երբ Մարթին մօտեցաւ իրեն: Մարթին խօսեցաւ հետը, բայց առիւծը չպատասխանեց, այլ կը նայէր անոր վրայ առեկողմ անտարբերութեամբ: Բայց երբ Մարթին պիտի հեռանար անոր քովէն, առիւծը բարձրովին անակնկալ և մեծ տախենով մը յատկեց, նետուեցաւ վանդակին պատին վրայ, անկեց իւր թութերն երկաթ ձողերուն մէջէն և իւր ճիրաններով պատուեց բոկոսեց Մարթինի վերարկուին մէկ մասը: Մարթին արագ շարժումով մը ետ քաշուեցաւ և այսպէս զերծ մնաց անոր ուրիշ փասաներէն: Կը տեսնէք որ անտունք երկար ժամանակ միտք կը պահէն վարմանց քաղցրութիւնը և դառնութիւնը:

Ամերիկայի Միտինարայ Արտոնուարէն Գրուած է Մարթինի մասին Տնօրէն—Սմիթհարնեան Հաստատութեան Գրասենեակէն

